



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆ

№ 46818-Ն « 14 » 03 2018թ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ՀՀ աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 158-162-րդ հոդվածների ու ՀՀ կառավարության 11.08.2005թ. թիվ 1599-Ն ու 1384-Ն որոշումների պահանջները և ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետով.

հրամայում եմ

1. Հաստատել 2018 թվականին Երևանի պետական համալսարանի աշխատողների ամենամյա արձակուրդի տրամադրման հետևյալ ժամանակացույցը.

ա) ԵՊՀ պրոֆեսորադասախոսական և գիտական համակազմերի աշխատողներին տրամադրել 35 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2018թ. հուլիսի 9-ից մինչև օգոստոսի 24-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

բ) ԵՊՀ ռեկտորին, պրոռեկտորներին և ԵՊՀ կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարներին (ներառյալ՝ բաժնի վարիչներին) տրամադրել 25 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա երկարացված արձակուրդ՝ 2018թ. հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 24-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

գ) ԵՊՀ գրադարանի աշխատողներին տրամադրել 20 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա նվազագույն արձակուրդ և 5 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա լրացուցիչ արձակուրդ՝ 2018թ. հուլիսի 23-ից մինչև օգոստոսի 24-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում,

դ) ԵՊՀ այլ կատեգորիայի աշխատողներին տրամադրել 20 աշխատանքային օր տևողությամբ ամենամյա նվազագույն արձակուրդ՝ 2018թ. հուլիսի 30-ից մինչև օգոստոսի 24-ն (ներառյալ) ընկած ժամանակահատվածում:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետում սահմանված ժամանակացույցից տարբերվող այլ ժամկետներում աշխատողներին ամենամյա արձակուրդ (կամ դրա մի մասը) կարող է տրամադրվել միայն ԵՊՀ ռեկտորի հրամանով:

3. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ աշխատողներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ  Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ